ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՈՒԺԵՐԻ ՓՈՓՈԽՈՒՈՂ ԴԵՐԸ

ԶԵԿՈՅՑ

Երեւան 2025

Բովանդակութիւն

Զեկոյցի մասին.....2

1. Տարածքային պաշտպանութիւնը ՀՊԱՀ-ում.....2

2. Տարածքային պաշտպանութեան ուժերը ռուս-ուկրաինական պատերազմում.....5

3. Թայուանի մօտեցումը տարածքային պաշտպանութեան ուժերին.....7

4. Յատուկ գործողութիւնների ուժերի եւ Տարածքային պաշտպանութեան համագործակցութիւնը ՀՊԱՀ շրջանակում.....9

ԶԵԿՈՅՑԻ ՄԱՍԻՆ

Սոյն զեկոյցը պատրաստուած է Ոգեզէն համայնքի եւ ԱՌ Միաւորման աշխատանքային խմբի կողմից: Զեկոյցը ներկայացնում է Տարածքային պաշտպանութեան ուժերի փոփոխուող դերը Հայաստանի համապարփակ պաշտպանութեան եւ անվտանգութեան համակարգի շրջանակում պահեստազօրային համակարգի ներքոյ:

Զեկոյցը համադրում է միջազգային փորձը՝ ներառեալ Ուկրաինայի եւ Թայուանի օրինակները, ինչպէս նաեւ ՆԱՏՕ-ի եւ արեւմտեան ռազմավարական հաստատութիւնների կողմից մշակուած հայեցակարգերը: Հիմնական շեշտադրումն այն է, որ Տարածքային պաշտպանութիւնը ոչ միայն տեղական ինքնապաշտպանութեան ձեւ է, այլեւ ազգային դիմադրութեան եւ զսպման կարեւոր գործիք:

Զեկոյցը պատրաստուած է Հրաչեայ Արզումանեանի «Հորիզոններ[1]» աշխատութեան հիման վրայ, եւ նախատեսուած է պետական կառոյցների, պաշտպանական ոլորտի մասնագէտների, փորձագիտական համայնքի եւ քաղաքացիական հասարակութեան համար:

1. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆԸ ՀՊԱՀ-ՈՒՄ

Տարածքային պաշտպանութեան համակարգը հնագոյն աւանդոյթ ունի եւ բազմիցս վճռորոշ դեր է խաղացել բազմաթիւ երկրների պաշտպանութեան մէջ՝ ներգրաւելով հասարակութեան լայն շերտեր: Տարածքային պաշտպանութեան ուժերը սերտ կապուած են եղել իրավիճակային կամաւորական ռազմական խմբերի ձեւաւորման հետ, որոնք կազմաւորուել են յարձակումներին դիմադրելու, ապա նաեւ օկուպացիոն ուժերի դէմ պայքարելու համար: Տարբեր համայնքներում ստեղծուել են պաշտօնական եւ ոչ պաշտօնական ստորաբաժանումներ այն տարածաշրջանների բնակիչների կողմից, որտեղ դրանք հետագայում վճռականօրէն գործել են՝ պաշտպանելով իրենց համայնքները: Պատմութեան մէջ լաւ փաստագրուած են պարտիզանական պատերազմում բնակչութեան գործուն մասնակցութեան դրուագներ, օրինակ՝ իսպանացիների դիմադրութիւնը Նապոլէոնեան ներխուժմանը[2]: Այնուամենայնիւ, տարածքային պաշտպանութեան ուժերը պէտք է պատրաստ լինեն ոչ միայն անկանոն պատերազմների, այլեւ մարտական գործողութիւնների՝ կանոնաւոր զօրքերի կազմում:

Հայեցակարգային առումով «տարածքային պաշտպանութիւն» եզրոյթը ինքնատիպ է եւ ունի քաղաքական, կազմակերպչական եւ ռազմավարական բազմաշերտ իմաստներ[3]: «Տարածքային պաշտպանութիւն» հասկացութիւնը ուղղակիօրէն կապուած չէ ՆԱՏՕ-ի եզրութաբանութեան հետ, եւ սահմանուած չէ ՆԱՏՕ-ի AAP-6 եզրոյթների բառարանում: Օրինակ՝ Ֆինլանդիան

---

1 **Arzumanian V. Hrachya**. *Horizons: A Comprehensive Approach to National Security building*. Yerevan: Zangak, 2023, 400 pages. (In Armenian, Russian).

2 **Арзуманян Р. В.** Стратегия иррегулярной войны: теория и практика применения. Теоретические и стратегические проблемы концептуализации, религиозные и военно-политические отношения в операционной среде иррегулярных военных действий / под общ. ред. А.Б. Михайловского. М.: АНО ЦСОиП, 2015. 315 с. (Новая стратегия, 4), с. 197–199.

3 **Roberts, A.** *Nations in Arms, The Theory & Practice of Territorial Defence*. The International Institute for Strategic Studies (IISS), London, 1976, p. 34.

տարածքային պաշտպանութեան համակարգի հիման վրայ ազգային պաշտպանութեան կազմակերպման հարուստ փորձ ունի, որում առանցքային է, որ հակառակորդը բախուում է տեղական ուժերի դիմադրութեանը[4]: Նման ռազմավարութիւնը եւ մարտավարութիւնը կարող են արդիւնաւէտ լինել թշնամու յարձակողական ուժերի գործողութիւնները հետաձգելու եւ ուժասպառ անելու համար՝ ստիպելով նրան հրաժարուել տարածք կամ ենթակառուցուածք գրաւելու ծրագրերից, եւ երկարաժամկէտ հեռանկարում բարենպաստ պայմաններ ստեղծելով հակագրոհի համար:

Տեսականօրէն Տարածքային պաշտպանութեան ուժերը (ՏՊՈ) կարելի է բաժանել երեք հիմնական դասակարգերի[5]՝

- Զինուած ուժերի մոդելով ձեւաւորուած ՏՊՈ-ներ՝ ունակ իրականացնել մարտական առաքելութիւններ կամ տեղակայուել արտերկրում (օրինակ՝ ԱՄՆ, Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա):
- Փոքր պետութիւնների ՏՊՈ-ներ՝ նախատեսուած կենսական նշանակութեան օբյեկտների պաշտպանութեան եւ պահպանման, կանոնաւոր զինուած ուժերի զօրահաւաքին աջակցելու, ինչպէս նաեւ դրանց օպերատիւ տեղակայման ու զօրաշարժի ապահովման համար (օրինակ՝ Բալթեան երկրներ, Նորուեգիա, Դանիա, Բելգիա):
- Չէզոք պետութիւնների ՏՊՈ-ներ՝ լայն շրջանակի առաջադրանքներով, ներառեալ պարտիզանական պատերազմը օկուպացիայի դէպքում (օրինակ՝ Ֆինլանդիա, Շուեդիա, Շուեյցարիա):

Իւրաքանչիւր դասակարգում ստորաբաժանումների կառուցուածքը եւ առաջադրանքները տարբեր են խաղաղութեան, ճգնաժամի եւ պատերազմի պայմաններում, բայց շատ առումներով համընկնում են: 2014թ.-ից յետոյ տարածքային պաշտպանութեան ուժերի դերը տարասեռ սպառնալիքներին արձագանքելու հարցում դարձաւ լայն քննարկման առարկայ:

Ճիշտ մշակուած տարածքային պաշտպանութեան համակարգը արդիւնաւէտ միջոց է թշնամիների տարասեռ գործողութիւնների արդիւնաւէտութիւնը թուլացնելու համար, քանի որ տարածքային պաշտպանութեան ուժերի ստորաբաժանումները կարող են ծաւալուել տեղական մակարդակում ինչպէս նաեւ կարող են գործել ռազմավարական կերպով՝ հիմք ընդունելով միասնական հրամանատարութեանը բնորոշ սկզբունքները, միեւնոյն ժամանակ պահպանելով զգալի չափի ինքնավարութիւն տեղական մակարդակում[6]:

Տարածքային պաշտպանութեան ուժերի համար խնդիր է պատրաստութեան ժամանակը, քանի որ ռազմական ագրեսիայի դէպքում արձագանքման ժամանակը խիստ սահմանափակ է լինելու, հետեւաբար մշտական պատրաստութիւնը կենսական նշանակութիւն ունի: Շատ կարեւոր

---

4 **Tillotson H. M.** *Finland at Peace & War 1918–1993*. Russell Publishing Ltd, Norwich 1993, p. 276.

5 **Rieker P.** *From territorial defence to comprehensive security? European integration and the changing Norwegian and Swedish security identities*. Norwegian Institute of International Affairs, Oslo March 2002. 1 September 2022 <https://www.files.ethz.ch/isn/27374/626.pdf>.

6 **Jakubczak, R.** "Wojska Obrony Terytorialnej w sztuce wojennej," *Ante Portas – Studia nad Bezpieczeństwem* No 2(7), Ostrowiec Świętokrzyski 2016. 1 September 2022 <http://cejsh.icm.edu.pl/cejsh/element/bwmeta1.element.desklight-dd36221b-efa7-45b3-b03f-a55d63599ef9>.

է նաեւ պահեստազօրի համակարգի եւ պահեստազօրային ուժերի պատրաստութեան օրէնսդրական կարգաւորումները:

Տարածքային պաշտպանութեան համակարգը ամրապնդում է կապը հասարակութեան եւ զինուած ուժերի միջեւ, քանի որ կամաւորները գալիս են հասարակութեան բոլոր շերտերից եւ ունեն բազմազան անձնական ու մասնագիտական հմտութիւններ: ՏՊՈ կազմում ընդգրկուած պահեստազօրայինների դերն ու նշանակութիւնը կարող են ընդլայնուել պարբերական պատրաստութեան, ռազմական հմտութիւնների կատարելագործման եւ կարողութիւնների զարգացման շնորհիւ: Քանի որ տարածքային պաշտպանութեան ուժերի ստորաբաժանումները կամաւորական են, ազգային պաշտպանութեանը նուիրուածութեան եւ պատրաստակամութեան մակարդակը բարձր է: Այնուամենայնիւ, պատշաճ եւ շարունակական կրթութիւնն ու ազգային ոգու ամրապնդումը, համակարգի կենսական տարրեր են[7]:

Տարածքային պաշտպանութեան ուժերի ստորաբաժանումների զարգացումը կարևոր է նաև անկանոն եւ ասիմետրիկ սպառնալիքների դէմ պայքարի համատեքստում: Սակայն անհրաժեշտ են նպատակային ներդրումներ՝ մարտական եւ մասնագիտական կարողութիւնների բարձրացման, զինուած ուժերի կանոնաւոր ստորաբաժանումների հետ համատեղ վարժանքների կազմակերպման, ինչպէս նաև ժամանակակից զէնքի համակարգերի ձեռքբերման եւ կիրառման համար՝ հաշուի առնելով հնարաւոր հակառակորդի կարողութիւնները[8]:

Այնուամենայնիւ, ՏՊՈ-ի կամաւորական բնոյթը սահմանափակում է մարտական պատրաստութեան մակարդակը, որը ցածր է կանոնաւոր զինուած ուժերի մասնագիտական ստորաբաժանումների մակարդակից: Մասնագիտացման, մարտական կարողութիւնների եւ պատրաստութեան որակի բարելաւման համար անհրաժեշտ է լրացուցիչ ուսուցում, պատրաստութեան համակարգի վերանայում եւ ֆինանսական աջակցութիւն:

Մայքլ Կլեմմեսենի (Michael Clemmesen) կարծիքով տարածքային պաշտպանութիւնը նախընտրելի տարբերակ չէ: Այն աւելի արդիւնաւէտ է հակառակորդին զսպելու համար, մինչեւ նրա՝ երկրի տարածք մուտք գործելը[9]: Սակայն նման տարբերակը միշտ չէ, որ հասանելի է համեմատաբար փոքր երկրներին եւ առաւել ուժեղ հակառակորդների հետ բախման դէպքում: Էստոնիայում, պաշտպանութեան սցենարների քննարկման ժամանակ, որոշուեց ստեղծել այնպիսի ուժեր, որոնք կը կարողանային պաշտպանել ինքնիշխանութիւնը եւ երկարատեւ հակամարտութեան ամբողջ ընթացքում ցուցաբերել անընդհատ դիմադրութիւն: Նմանատիպ մօտեցում կիրառուել է նաեւ Լիտուայում եւ Լատուիայում[10]:

Հետաքրքիր է, թե ինչպէս են «համընդհանուր (total) պաշտպանութիւն» եւ «անվտանգութեան համապարփակ մօտեցում» եզրոյթները նպաստում տարածքային պաշտպանութեան սահմանմանը: Մի կողմից՝ տարածքային պաշտպանութիւնը մասամբ արտացոլում է համընդհանուր պաշտպանութեան տրամաբանութիւնը եւ դրա ուղղուածութիւնը պատերազմի

7 **Veebel et al**, *Territorial Defence, Comprehensive Defence and Total Defence*, p. 6.
8 ***Ibid***., p. 6.
9 **Clemmesen. Michael**. “Territorial Defence in Baltic Defence College,” *The Baltic Defence Review*, No 3, 2000.
10 **Laaneots A.** “The Defence League and Defence Districts,” *The Baltic Defence Review*, No 3, 2000. 1 September 2022 <https://www.baltdefcol.org/files/docs/bdreview/09bdr100.pdf>.

պայմաններում՝ դառնալով համընդհանուր պաշտպանութեան կիրառման գործնական միջոց: Միւս կողմից՝ տարածքային պաշտպանութիւնը համապարփակ մօտեցմանը յատուկ պաշտպանութեան տիրոյթները համադրում է աշխարհագրական միաւորներին:

2. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՈՒԺԵՐԸ ՌՈՒՍ-ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ

2022թ.-ի փետրուարի 24-ին լայնածաւալ ռազմական գործողութիւններ սկսելով՝ Ռուսաստանի բարձրագոյն ռազմական-քաղաքական ղեկավարութիւնը եւ վերլուծաբանների մեծ մասը կանխատեսում էին կարճատեւ պատերազմ[11]: Սակայն Ուկրաինայի Տարածքային պաշտպանութեան ուժերի կամքը եւ կարողութիւնները, ինչպէս նաեւ Կիեւի պաշտպանութեան մէջ նրանց խաղացած դերը, անակնկալ դարձան եւ ռուսական զօրքի, եւ միջազգային հանրութեան համար: Կիեւի համար մղուած մարտերի ընթացքում Ուկրաինայի կառավարութիւնը զօրակոչեց 18–60 տարեկան բոլոր տղամարդկանց[12] եւ սկսեց քաղաքացիական բնակչութեան զինուորականացումը՝ միայն մայրաքաղաքում բաժանելով աւելի քան 18 000 ինքնաձիգ[13]:

Թեեւ Ուկրաինայի ՏՊՈՒ-ի կամաւորների մեծ մասը կանոնաւոր բանակի ֆիզիկական պատրաստութեան չափանիշներին չէին համապատասխանում, բայց նրանք կարողացան զսպել ռուսական յարձակումը եւ պահպանել մայրաքաղաքի վերահսկողութիւնը: Տարածքային պաշտպանութեան ուժերը ցուցադրեցին իրենց ազդեցութիւնը պատերազմի ընթացքի վրայ: Սա կարեւոր հետեւութիւն կը լինի ապագայ պատերազմների համար, յատկապէս մեծ տէրութիւնների եւ նրանց հարեւան փոքր պետութիւնների պարագայում[14]:

2021թ.-ի յուլիսին, երբ Ռուսաստանը սկսեց զօրք կուտակել սահմանին, Ուկրաինայի խորհրդարանը (Ռադա) ընդունեց «Ազգային դիմադրութեան հիմունքների մասին» նորարար օրէնքը[15]՝ տարածքային պաշտպանութեան ուժերը հռչակելով զինուած ուժերի առանձին զօրատեսակ: Օրէնքը ուժի մէջ մտաւ 2022 թ. յունուարին եւ կամաւորները պաշտօնապէս ներառուեցին ազգային պաշտպանութեան համակարգում: Օրէնքը ստեղծեց տարածքային պաշտպանութեան տեղակայման, կազմակերպման եւ իրաւական հիմք՝ սահմանելով ոչ

---

11 **Carafano, James Jay.** “Why Gen. Milley’s Ukraine War Prediction Missed,” *The Heritage Foundation*, Apr 8, 2022. 1 September 2022 <https://www.heritage.org/defense/commentary/why-gen-milleys-ukraine-war-prediction-missed-mile>.

12 **Williams, Matthias.** “Ukraine starts drafting reservists aged 18-60 after president's order,” *Reuters*, February 23, 2022. 1 September 2022 <https://www.reuters.com/world/europe/ukraine-starts-drafting-reservists-aged-18-60-after-presidents-order-2022-02-23/>.

13 **MacDiarmid, Campbell.** “The tracksuit resistance: Ukrainian civilians grab their AK-47s and take on advancing Russian army,” *The Telegraph*, 26 February, 2022. 1 September 2022 <https://www.telegraph.co.uk/world-news/2022/02/26/tracksuit-resistance-ukrainian-civilians-grab-ak-47s-take-advancing/>.

14 **Collins, Liam and John Spencer.** “How volunteers can help defeat great powers,” *The Military Times*, 5 July, 2022. 1 September 2022 <https://www.militarytimes.com/opinion/commentary/2022/07/05/how-volunteers-can-defeat-great-powers/>.

15 **UATV**. Law on foundations of national resistance enters into force in Ukraine,” *UATV* News, 01 January, 2022. 1 September 2022 <https://uatv.ua/en/law-on-foundations-of-national-resistance-enters-into-force-in-ukraine/>.

կանոնաւոր ստորաբաժանումների դերը: ՏՊՈ-ի տարածաշրջանային 20 բրիգադներում ընդգրկուած էին 10 000 հաստիքային պաշտօն եւ 120 000 քաղաքացիական պահեստազօրային: Օրէնքը նաեւ սահմանեց իրաւական սահմանափակումներ, որոնց միջոցով պետութիւնը կարող է վերահսկել, զսպել կամ արգելել հակարդիւնաւէտ դիմադրութիւնը[16]:

Ուկրաինայում տարածքային պաշտպանութեան ուժերը լուծեցին 2014թ.-ին առաջացած հիմնախնդիրը, երբ քաղաքացիները պատրաստ էին կռուել, բայց չունէին ռազմական պատրաստութիւն: Այդ տարիներին ձեւաւորուած տարածքային գումարտակները հետագայում ներառուեցին կանոնաւոր ուժերի կազմում:

Ռուսական ներխուժումը սկսուեց դեռեւս մինչեւ տարածքային պաշտպանութեան ուժերի ստեղծման գործընթացի աւարտը, սակայն Ուկրաինան արդեն պատրաստ էր զինել կամաւորներին: ՏՊՈ-ի պաշտօնական կառուցուածքներին չմասնակցող կամաւորները հարկադրուած ինքնակազմակերպուեցին եւ պաշտպանական դիրքեր զբաղեցրին իրենց քաղաքներում: Կամաւորական ստորաբաժանումները ՏՊՈ-ի կազմում ընդգրկուեցին միայն Կիեւի պաշտպանութեան աւարտի ժամանակ: Ռուսաստանի զինուած ուժերի կատարած եւ ներկայումս հետաքննուող ռազմական յանցագործութիւնների հետեւանքով յայտնի դարձած Բուչայի ՏՊՈ գումարտակը վճռորոշ դեր ունեցաւ մայրաքաղաքի պաշտպանութեան մէջ, սակայն նրա պաշտօնական ձեւաւորումն ամբողջովին աւարտուեց միայն մարտի 31-ից յետոյ[17]:

Ուկրաինայի փորձը ցոյց տուեց, որ տարածքային պաշտպանութեան ուժերը փոքր պետութիւնների զինուած ուժերի անբաժանելի բաղադրիչն են: Քաղաքացիական բնակչութիւնը եւ կամաւորները վճռորոշ դեր ունեն թշնամու ուժերի հետախուզման եւ դիտարկման գործում: Միեւնոյն ժամանակ, ՏՊՈ-ի գործունէութիւնը իսկապէս արդիւնաւէտ է դառնում միայն այն պարագայում, երբ այն համակարգուած է յատուկ գործողութիւնների ուժերի եւ կանոնաւոր բանակի աջակցութեամբ. միայն այդ համադրութիւնն է ՏՊՈ-ին հնարաւորութիւն տալիս դիմակայելու հակառակորդի խոշոր կազմաւորումներին[18]:

Տեղական ինքնակառավարման բարեփոխման դերը Ուկրաինայի տարածքային պաշտպանութեան ուժերում. Ուկրաինայի դիմակայունութեան հիմնական աղբիւրը քաղաքացիական ինքնութեան զգացումն է, որը դարձել է տարածքային պաշտպանութեան հիմք: Սա բացատրում է, թե ինչու մեծ քանակով ուկրաինացիներ այդ թուում ռուսախօս ուկրաինացիներ պատրաստ են պաշտպանելու իրենց համայնքները ռուսական ներխուժումից: Քաղաքացիական ինքնութեան ձեւաւորման գործընթացը 2014թ.-ին «Մայդանից» յետոյ նախաձեռնուած ապակենտրոնացման բարեփոխման արդիւնք է: Այդ բարեփոխումը կարեւոր դեր է խաղացել ազգային միասնութեան ձեւաւորման գործում՝ ուկրաինացիներին տալով այն համոզումը, որ իրենք են կառուցում իրենց երկիրը: Հասարակութեան համախմբմանը նպաստեց յատկապէս տեղական ինքնակառավարման մարմիններին լայն լիազօրութիւններ եւ իշխանութիւն շնորհելը: Նախկինում «զրոյական հանրագումարի» տրամաբանութեամբ մրցող էթնիկ խմբերը

16 **Collins**, *How volunteers can help defeat great powers*.

17 **Cara, Anna.** "War Crimes Watch: A Bucha's devastating Walk through Bucha's Horror," *The Associated Press News*, April 10, 2022. 1 September 2022 <https://apnews.com/article/russia-ukraine-europe-war-crimes-7791e247ce7087dddf64a2bbdcc5b888>.

18 **Collins**, *How volunteers can help defeat great powers*.

վերածուեցին քաղաքացիական համայնքների՝ «դրական հանրագումարի» տրամաբանութեամբ: Ապակենտրոնացումը ամրապնդեց Ուկրաինայի պետականութիւնը, ինչպէս նաեւ ներքեւից վերեւ կառուցուած եւ քաղաքացիների վրայ հիմնուած քաղաքական լեգիտիմութիւնը[19]:

Ուկրաինայի ապակենտրոնացման ուղին ինքնատիպ էր: 2015թ.-ին օրէնքը ներդրեց նոր մօտեցում. վերից վար իրականացուող ապակենտրոնացման փոխարէն հասարակութեանը թոյլ տրուեց կամաւոր ինքնակազմակերպուել նոր տեղական համայնքների՝ Հրոմադաների մէջ: Ապակենտրոնացումը փոխեց կառավարման համակարգը՝ հնարաւորութիւն ընձեռելով տեղական իշխանութիւններին տնօրինել աւելի շատ միջոցներ եւ դրանք ուղղել ենթակառուցուածքների զարգացմանն ու բնակչութեան բարեկեցութեանը: Բարեփոխումից առաջ եկամուտների մեծ մասը գնում էր կենտրոնական կառավարութիւն, իսկ այժմ դրանց շուրջ 60%-ը մնում է տեղական մակարդակում[20]:

Բացի եկամուտների վերահսկումից՝ Ուկրաինան ներդրեց մասնակցային բիւջետաւորում, ինչը քաղաքացիներին տուեց բիւջէի ձեւաւորման գործընթացում մասնակցելու աւելի լայն իրաւունքներ: Կիեւի Տնտեսագիտութեան Դպրոցի կողմից բարեփոխման վերաբերեալ կատարուած վերլուծութիւնը ցոյց տուեց, որ Հրոմադաները զգալի չափով աւելի շատ տեղական հարկեր էին հաւաքում, քան նախկինում: Ազդեցութիւնը յատկապէս զգալի էր փոքր Հրոմադաներում: Սա հակասում էր այն կանխատեսումներին, ըստ որոնց մեծ վարչական միաւորները աւելի արդիւնաւէտ կը լինէին[21]:

Իշխանութեան ապակենտրոնացումը հիմք դրեց տարածքային պաշտպանութեան ուժերի ձեւաւորմանը, որոնց հիմնական առաքելութիւնը համայնքների եւ երկրի պաշտպանութիւնն էր: 2022 թ. յունուարին ուժի մէջ մտած «Ազգային դիմադրութեան հիմունքների մասին» օրէնքը հնարաւորութիւն տուեց սկսել ՏՊՈւ-ի շրջանակում բնակչութեան ռազմական պատրաստութեան եւ զինման համակարգի ստեղծումը: Առանց կամ քիչ ռազմական փորձով քաղաքացիական անձինք հնարաւորութիւն ստացան վերապատրաստուելու ՏՊՈւ-ի հրահանգիչների եւ հրամանատարների աջակցութեամբ[22]:

3. ԹԱՅՈՒԱՆԻ ՄՕՏԵՑՈՒՄԸ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՈՒԺԵՐԻՆ

Ռուս-ուկրաինական պատերազմում Ուկրաինայի փորձը վկայում է Թայուանի ազգային դիմադրութեան եւ տարածքային պաշտպանութեան ուժերի կարեւորութեան մասին: Դրանք կարող են կենսական դեր ունենալ Չինաստանի հնարաւոր յարձակումը զսպելու կամ հետ մղելու գործում:

Ճիշտ կազմակերպուած, պատրաստուած եւ զինուած տարածքային պաշտպանութեան ուժերը զգալի չափով բարդացնում են երկրի գրաւումը եւ օկուպացուած բնակչութեան վերահսկումը:

19 **Brik, Tymofii and Jennifer Brick Murtazashvili.** “The Source of Ukraine’s Resilience,” *Foreign Affairs*, June 28, 2022. 1 September 2022 <https://www.foreignaffairs.com/articles/ukraine/2022-06-28/source-ukraines-resilience#author-info>.

20 ***Ibid.***

21 ***Ibid.***

22 ***Ibid.***

Երկարատեւ պատերազմի հեռանկարը կարող է ստիպել հակառակորդին հրաժարուել ներխուժումից: Եթե զսպումը չգործի, տարածքային պաշտպանութեան ուժերը կարող են ժամանակ շահել միջազգային աջակցութիւն ստանալու եւ արտաքին ուժերի միջամտութիւնը ապահովելու համար:

Վստահելի եւ լաւ կազմակերպուած տարածքային պաշտպանութեան ուժերը կարող են դադարեցնել բանավէճերը հասարակութեան ինքնապաշտպանութեան պատրաստակամութեան մասին: Մարդիկ աւելի պատրաստակամ են պաշտպանել իրենց տունն ու ընտանիքը, երբ գործում են կազմակերպուած, պատրաստուած եւ զինուած են տարածքային պաշտպանութեան համակարգում: Այս առումով Թայուանը բացառութիւն չէ: ՏՊՈւ-ն, անցնելով դաշտային մարզումներ, քաղաքացիների համար կը ծառայի որպէս ազդակ մասնակցելու պաշտպանութեանը եւ կը խթանի ազգային ինքնութեան գիտակցումը[23]:

Որպէսզի քաղաքացիների՝ երկիրը պաշտպանելու պատրաստակամութիւնը դառնայ Պեկինի հաշուարկների վրայ ազդող գործօն, համակարգը պէտք է ունենայ խիստ պատրաստութիւն եւ կազմակերպուածութիւն, զէնքի ու զինամթերքի հասանելիութիւն: Տարածքային պաշտպանութեան ամբողջական եւ բազմաշերտ համակարգի ստեղծումը ծաւալուն նախաձեռնութիւն է[24]: Միայն կառավարութիւնն ունի դրա իրագործման ջանքը համախմբելու համար անհրաժեշտ լիազօրութիւններն ու միջոցները:

Թայուանի տարածքային պաշտպանութեան ծրագիրը. Թայուանի համար ամենաարդիւնաւէտ մոդելը կը լինի անկախ տարածքային պաշտպանութեան ուժերի ստեղծումը: Այս ուժերը պէտք է գործեն Ազգային պաշտպանութեան նախարարութեան հովանու ներքոյ՝ որպէս ինքնուրոյն զօրատեսակ: Նրանց հրամանատարի կոչումը պէտք է հաւասարազօր լինի այլ զօրատեսակների հրամանատարների կոչմանը:

Թայուանի ՏՊՈւ համակարգը պէտք է կառուցուի կամաւորների՝ երիտասարդ տղամարդկանց եւ կանանց շուրջ, ովքեր պատրաստ են ծառայել, բայց ոչ կանոնաւոր բանակում: ՏՊՈւ-ին միանալը կարող է դիտարկուել որպէս պարտադիր զինծառայութեան այլընտրանք: Ուժերը պէտք է ձեւաւորուեն աշխարհագրական սկզբունքով, անցնեն պատրաստութիւն եւ գործեն սեփական համայնքներին մօտ: Այս մոդելը կարող է նմանուել ԱՄՆ Ազգային գուարդիային, սակայն նրանք չպէտք է պատրաստուեն կամ զինուեն ինքնուրոյն կերպով կամ կանոնաւոր բանակի ստորաբաժանումների կազմում աւանդական ռազմական գործողութիւնների համար:

Թեեւ ուժերի հիմնական մասը կը կազմեն քաղաքացիական անձինք, իւրաքանչիւր ստորաբաժանում պէտք է ներառի յատուկ գործողութիւնների ուժերի գործող եւ նախկին ծառայողներ: Դա ՏՊՈւ-ին հաղորդում է վստահելիութիւն եւ ապահովում որակեալ եւ

---

23 **Hsi-min, Lee and Michael A. Hunzeker.** “The View of Ukraine from Taiwan: Get Real about Territorial Defense,” *The War on the Rocks*, March, 2022. 1 September 2022 <https://warontherocks.com/2022/03/the-view-of-ukraine-from-taiwan-get-real-about-territorial-defense/>.

24 **Hsi-min, Lee and Michael A. Hunzeker.** “Taiwan’s Overall Defense Concept, Explained,” *The Diplomat* November 03, 2020. 1 September 2022 <https://thediplomat.com/2020/11/taiwans-overall-defense-concept-explained/>.

իրատեսական ռազմական պատրաստութիւն, ինչպէս նաեւ փոքր ստորաբաժանումներով ինքնուրոյն գործելու կարողութիւն[25]:

ՏՊՈՒ-ն պէտք է մասնակցի կանոնաւոր ուժերի վարժանքներին եւ զօրաշարժին: Սակայն պատերազմի ժամանակ նրանք նախատեսուած չեն առաջնագծում գործեու եւ չունեն բաւարար պատրաստութիւն եւ կրակային հզօրութիւն՝ զրահատանկերի եւ յարձակողական ստորաբաժանումների դէմ արդիւնաւէտ կռուելու համար:

ՏՊՈՒ-ի քննադատները հաճախ վիճարկում են արժէքն ու իրագործելիութեան խնդիրները: Արժէքի առումով՝ թեեւ այս ուժերը էժան չեն, դրանք աւելի շահաւէտ են, քան սահմանափակ քանակով թանկարժէք զինատեսակների գնումը: Բացի այդ, դրանք աւելի մեծ դեր ունեն հակառակորդին զսպելու գործում[26]:

Իրագործելիութեան տեսանկիւնից, Ուկրաինայի փորձը ցոյց է տալիս, որ տարածքային պաշտպանութեան համակարգը կարող է արդիւնաւէտ լինել ժամանակակից պատերազմում՝ դանդաղեցնելով հակառակորդի առաջխաղացումը: Կարեւոր է նաեւ նշել, որ ՏՊՈՒ-ն պարտադիր չէ լինի զանգուածային, որպէսզի արդիւնաւէտ լինի:

4. ՅԱՏՈՒԿ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՈՒԺԵՐԻ ԵՒ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՀՊԱՀ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

Բացի կանոնաւոր ուժերից, ՀՊԱՀ-ի երկու հիմնական բաղադրիչներն են յատուկ գործողութիւնների ուժերը եւ տարածքային պաշտպանութեան ուժերը: Յատուկ գործողութիւնների ուժերը ազգային պաշտպանութեան ռազմավարութեան իրականացման շրջանակում գործում են որպէս բազմաչափ ինտեգրատորներ՝ օպերատիւ եւ ռազմավարական մակարդակներում: Ինտեգրացիան ենթադրում է հզօրութիւն ստեղծելու նպատակով ուժերի եւ գործողութիւնների համադրում՝ որպէս փոխազդող միասնական ամբողջութիւն[27]: Յատուկ գործողութիւնների ուժերը կարող են դառնալ կապող օղակ համակցուած, կանոնաւոր, բազմազգ եւ միջգերատեսչական ուժերի ինտեգրման համար: Յատուկ գործողութիւնների ուժերն ունեն ոչ աւանդական մտածողութիւնը եւ մօտեցումները, ինչը նրանց դարձնում է ՀՊԱՀ շրջանակում շահագրգիռ կողմերին համախմբելու գործընթացի համար համապատասխան դերակատար[28]:

Շատ երկրներում յատուկ գործողութիւնների ուժերը միաւորում են ցամաքային, օդային եւ ծովային բաղադրիչները: Դրանք գործում են յատուկ գործողութիւնների հրամանատարութեան ներքոյ եւ կապելով նրանց աւելի լայն միացեալ ուժերի հետ: Անկանոն ռազմական

25 **U.S. Special Operation Forces**. Special Forces Operational Detachment Alpha (SFOD A). 2022. 1 September 2022 <https://www.americanspecialops.com/special-forces/odas/>.

26 **Hsi-min,** *The View of Ukraine from Taiwan*.

27 **Joint Publication** (JP) 1 (2017). *Doctrine for the Armed Forces of the United States*, Washington, DC: The Joint Staff, March 25, 2013, Incorporating Change 1, July 12, 2017, p. GL-8. 1 September 2022 <https://irp.fas.org/doddir/dod/jp1.pdf>.

28 **Stringer, Kevin D**. "Special Operations Forces (SOF): The Integrators for Total Defense and Resistance," *Journal on Baltic Security*, Vol. 8(1), April 2022. 1 September 2022 <https://journalonbalticsecurity.com/journal/JOBS/article/3>.

գործողութիւններին արդիւնաւէտ մասնակցելու համար անհրաժեշտ է յատուկ գործողութիւնների եւ կանոնաւոր ուժերի ինտեգրում[29]: Յատուկ գործողութիւնների հրամանատարութիւնը ապահովում է այս պահանջի կատարումը՝ համակարգելով գործողութիւնները կանոնաւոր ուժերի հետ[30]: «Ուժերի ինտեգրումը դիմադրութեան գործողութիւններում. հոլանդացի Ջեդբերգները եւ ԱՄՆ-ի Ալամո հետախոյզները» յօդուածում[31] յատուկ գործողութիւնների դերը դիտարկուում է որպէս ինտեգրատոր կանոնաւոր ուժերի հետ: Նշուած են նաեւ խոչընդոտներ, որոնք կարող են խանգարել նպատակին հասնելուն:

Յատուկ գործողութիւնների ուժերը յաճախ ներգրաւուում են բազմազգ եւ միջգերատեսչական գործողութիւններում, որոնք դուրս են նրանց պաշտօնական լիազօրութիւններից: Այդ գործելակերպով նրանք դառնում են շահագրգիռ կողմերի համախմբման խթանիչներ եւ նախաձեռնող ինտեգրատորներ: Այս դերում նրանք արձագանգում են սպառնալիքներին եւ հնարաւորութիւններին՝ ձգտելով փոխել միջավայրը եւ համադրել կազմակերպչական կարողութիւնները առկայ պայմանների հետ[32]: Այս կարողութիւնները յատկապէս կիրառելի են համազգային դիմադրութեան եւ տարածքային պաշտպանութեան ուժերի ինտեգրման համատեքստում:

Յատուկ գործողութիւնների ուժերի եւ Տարածքային պաշտպանութեան ուժերի սիմբիոզը եւ համագործակցութեան մոդելները

Սիմբիոզը. Յատուկ գործողութիւնների ուժերն ու տարածքային պաշտպանութեան ուժերը ազգային պաշտպանութեան մէջ ունեն սիմբիոտիկ եւ սերտ փոխկապուածութիւն: Յատուկ գործողութիւնների ուժերը կարող են դառնալ «սոսինձ», որը միաւորում է տարբեր գերատեսչական կառոյցները ՏՊՈւ-ի կառուցուածքում: Պարտիզանական պատերազմը, դիւերսիան եւ սաբոտաժը համազգային դիմադրութեան հիմնական գործառոյթներից են: Այս դաշտում յատուկ գործողութիւնների ուժերը կարող են տրամադրել կարողութիւններ կամ խորհրդատուական աջակցութիւն: Նրանք իրականացնում են նաեւ ուժերի բազմապատկման գործառոյթ: Օրինակ՝ ԱՄՆ Յատուկ գործողութիւնների ուժերի 12 հոգուց բաղկացած «Օպերատիւ Ալֆա» ջոկատը (Operational Detachment A – ODA) ըստ վարդապետութեան կարող է աջակցել տարածքային պաշտպանութեան կամ անկանոն ուժերի մէկ գումարտակի: Միեւնոյն ժամանակ յատուկ գործողութիւնների ուժերը չունեն զանգուածային եւ համազգային ներկայութիւն՝ ամբողջութեամբ ղեկավարելու համազգային դիմադրական գործողութիւններ: Այս պատճառով

29 **U.S. Department of Defense**. *Summary of the Irregular Warfare Annex to the National Defense Strategy,* Washington, DC: Department of Defense, 2020. 1 September 2022 <https://media.defense.gov/2020/Oct/02/2002510472/-1/-1/0/Irregular-Warfare-Annex-to-the-National-Defense-Strategy-Summary.PDF>.

30 **Allied Joint Publication** (AJP)-3.5. (2019). *Allied Joint Doctrine for Special Operations,* ed. B, version 1, Brussels: NATO Standardization Office, August 7, 2019, pp. 27–31.

31 **Stringer, Kevin D.** "Force Integration in Resistance Operations: Dutch Jedburghs and U.S. Alamo Scouts," *Joint Force Quarterly (JFQ)*, No. 102, 2021, p. 90-95. 1 September 2022 <https://ndupress.ndu.edu/Media/News/News-Article-View/Article/2680568/force-integration-in-resistance-operations-dutch-jedburghs-and-us-alamo-scouts/>.

32 **Bullis, Craig, Andrew Hill, and Lou Yuengert.** *The Roles of a Strategic Leader: Mintzberg's Framework*. Faculty Paper, Carlisle Barracks, PA: U.S. Army War College, 2012.

ՏՊՈ-ի եւ յատուկ գործողութիւնների ուժերի փոխկապուածութիւնը ստանում է սիներգետիկ բնոյթ[33]:

Ազգային տարածքային պաշտպանութեան ուժերն ունեն երեք անբաժանելի յատկանիշ, որոնց շնորհիւ նրանք կենսական նշանակութիւն են ստանում դիմադրութեան կազմակերպման համար:

- **Երկակի քաղաքացիական եւ ռազմական դերակատարում.** ՏՊՈ-ն ապահովում է կապ քաղաքացիական բնակչութեան հետ, որը հանդիսանում է դիմադրութեան հիմնական աղբիւր: Նրանք միաժամանակ նպաստում են հասարակական մոբիլիզացիային: Քաղաքացիական բնակչութեան մասնակցութիւնը ուժեղացնում է դիմադրութեան պատրաստ պաշտպանական միջավայրը[34]:
- **Աշխարհագրական տարածում.** ՏՊՈ ստորաբաժանումները տեղակայուած են երկրի ողջ տարածքում: Նրանք ունեն տեղական բնակչութեան եւ միջավայրի խորքային գիտելիք եւ սերտ կապեր համայնքների ու առաջնորդների հետ: Այս համազգային ներկայութիւնը նրանց դարձնում է տեղական «զգայուն ցուցիչներ», որոնք կարող են բացայայտել թաքնուած գործողութիւններ գորշ գօտում՝ համայնքային մակարդակում:
- **Կամաւորների եւ հայրենասէրների հէնք.** ՏՊՈ-ն հենուում է կամաւորների եւ հայրենասէր քաղաքացիների վրայ: Նրանք պատրաստ են ծառայել եւ պաշտպանել պետութիւնն ու ազգը: Նրանց քաղաքացիական փորձը եւ մասնագիտական հմտութիւնները կարող են օգտակար լինել դիմադրութեան կազմակերպման մէջ[35]:

Համագործակցութեան մոդելները. Յատուկ գործողութիւնների եւ տարածքային պաշտպանութեան ուժերի փոխկապակցուածութիւնը դիմադրութեան գործողութիւններում պահանջում է համագործակցութեան յստակ կառուցուածք: ՀՊԱՀ-ի կառուցման ընթացքում կարեւոր է նաեւ կառավարութեան լիազօրութիւնների սահմանումը խաղաղութեան, ճգնաժամի եւ պատերազմի ժամանակ: Ազգային դիմադրութեան շրջանակում կարելի է առանձնացնել համագործակցութեան երեք տեսական մոդել՝

- ուժերի մատակարար («force provider»),
- ուսուցում եւ վարդապետութիւն («TRADOC»),
- խորհրդատուութիւն, աջակցութիւն եւ ուղեկցում («advise, assist, and accompany»)[36]:

Այս մոդելները մեկնարկային հիմք են քննարկումների համար: Դրանք ամբողջական կամ փոխադարձ բացառող չեն եւ կարող են յարմարեցուել ՀՊԱՀ-ի պահանջներին: Դրանք կարող են կիրառուել նաեւ ՏՊՈ-ի կամ ազգային գուարդիայի մոդելի համար՝ ազգային դիմադրութեան խնդիրները լուծելու նպատակով:

- *Ուժերի մատակարար.* Խաղաղ ժամանակ ՏՊՈ-ն հաւաքագրում եւ պատրաստում է անձնակազմ դիմադրութեան գործողութիւններ իրականացնելու կամ դրանց աջակցելու համար: Անձնակազմի ուսուցումն ու վարժանքը իրականացուում են ՏՊՈ ուսումնական կենտրոններում: Անհրաժեշտութեան դէպքում օգտագործում է օտարերկրեայ

33 **Stringer**, *Special Operations Forces (SOF).*
34 **Lindsay, Franklin**. *Beacons in the Night: With the OSS and Tito's Partisans in Wartime Yugoslavia,* Stanford, CA: Stanford University Press., 1993.
35 **Stringer**, *Special Operations Forces (SOF).*
36 ***Ibid.***

գործընկերների փորձը կամ յատուկ գործողությունների ուժերից կցուած մասնագէտների աջակցությունը: Ճգնաժամի կամ պատերազմի ժամանակ ՏՊՈ-ն ենթարկուում է մէկ այլ օպերատիւ հրամանատարութեան, այդ թուում դա կարող է լինել յատուկ գործողությունների հրամանատարութեանը: Այս մոդելով ՏՊՈ-ն իրականացնում է անձնակազմի համալրման եւ ուժերի մատակարարի գործառոյթ:

– *Ուսուցում եւ վարդապետություն.* Խաղաղ ժամանակ յատուկ գործողությունների ուժերի հրամանատարությունը մշակում է դիմադրութեան վարդապետությունը: Այնուհետեւ այդ շրջանակում ուսուցանում է ՏՊՈ-ին՝ զարգացնելու առաջադրանքների կատարման համար անհրաժեշտ հմտությունները: Ճգնաժամի կամ պատերազմի ժամանակ ստորաբաժանումները մնում են ՏՊՈ հրամանատարութեան ներքոյ եւ գործում են տարածաշրջանային շտաբի ղեկավարութեամբ: Նրանց գործողությունները պէտք է համաձայնեցուեն յատուկ գործողությունների ուժերի հետ՝ ըստ մարտադաշտի պահանջների:

– *Խորհրդատություն, աջակցություն եւ ուղեկցում.* Յատուկ գործողությունների ուժերի հրամանատարությունը ՏՊՈ ստորաբաժանումները դիտարկում է որպէս ներքին անկանոն ուժեր: Դրանց կցուում են յատուկ գործողությունների ստորաբաժանումներ՝ անկանոն պատերազմական գործողությունների շրջանակում դիմադրութեան կարողությունների զարգացման համար «խորհրդատուություն եւ աջակցություն» ռեժիմով: Ճգնաժամի կամ պատերազմի դէպքում յատուկ գործողությունների ստորաբաժանումները ուղեկցում են ՏՊՈ-ին դիմադրութեան գործողություններում: Ազգային հրամանատարությունը կարող է այս տարասեռ ստորաբաժանումները կցել ցանկացած հրամանատարութեան՝ ըստ օպերատիւ իրավիճակի պահանջների:

Այսպիսով, յատուկ գործողությունների ուժերը ՀՊԱՀ շրջանակում կարող են ստանձնել ինտեգրատորի կարեւոր դեր: Նրանք ապահովում են կապը միջգերատեսչական եւ բազմազգ կառոյցների միջեւ, դառնում են ՏՊՈ-ի կապող օղակ եւ սերտ գործընկեր ճգնաժամի եւ պատերազմի ժամանակ: Ցանկացած երկրի համար կարեւոր է նախօրոք որոշել համագործակցութեան մոդելը, ինչպէս նաեւ հրամանատարութեան եւ կառավարման (command-and-control) յարաբերությունները: Սա թոյլ է տալիս խուսափել ոչ համակարգուած եւ անարդիւնաւէտ մեխանիզմներից ճգնաժամի եւ պատերազմի ժամանակ[37]:

Յատուկ գործողությունների ուժերը ՀՊԱՀ շրջանակում ազգային դիմադրութեան կազմակերպման մէջ

Սառը պատերազմի տարիներին ՆԱՏՕ-ի եւ Վարշաւայի պայմանագրի զսպման ռազմավարութեան հիմնական տարրը Կենտրոնական Եւրոպայում տեղակայուած լայնածաւալ կանոնաւոր ուժերն էին: Սակայն մի շարք ՆԱՏՕ անդամ երկրներ նաեւ ստեղծել էին գաղտնի հետախուզական ցանցեր, որոնք նախատեսուած էին գործելու այն տարածքներում, որոնք պատերազմի դէպքում կարող էին օկուպացուել խորհրդային զօրքերի կողմից: Այս ցանցերի առաքելությունը խորհրդային օկուպացիային դիմադրություն կազմակերպելն էր. դիւերսիաներ

37 ***Ibid.***

իրականացնել, ձեւաւորել պարտիզանական խմբեր եւ հաւաքել հետախուզական տուեալներ՝ դրանք փոխանցելով ՆԱՏՕ դաշնակիցներին[38]:

Սառը պատերազմի աւարտից յետոյ այդ ցանցերը ապամոնտաժուեցին, սակայն Ռուսաստանի ագրեսիւ քաղաքականութիւնը ստիպեց ձեռնարկել դրանց վերականգնումը: Եւրոպայում ԱՄՆ յատուկ գործողութիւնների ուժերի հրամանատարութիւնը սկսեց մշակել դիմադրութեան հայեցակարգ՝ ընդունելով, որ ՆԱՏՕ-ի առաջապահ տեղակայման կանոնաւոր ուժերը բաւարար չէին Ռուսաստանի լայնածաւալ ներխուժումը հետ մղելու համար:

Հրամանատարութիւնը, ՆԱՏՕ-ի անդամ երկրների, դաշնակիցների եւ գործընկերների հետ միասին, վերականգնում էր գաղտնի կազմակերպութիւնների ստեղծման փորձը եւ համադրում նոր գիտելիքի հետ՝ դիմադրութեան գործնական եւ արդիւնաւէտ հայեցակարգ մշակելու նպատակով[39]:

2013թ.-ին Եւրոպայում ԱՄՆ յատուկ գործողութիւնների ուժերի հրամանատարութիւնը սկսեց ուսումնասիրել դիմադրութեան կազմակերպման ուղիները: Այս աշխատանքը իրականացուեց ոչ աւանդական պատերազմի վարդապետութեան շրջանակում: Նախագիծը զարգացուեց ակադեմիական եւ մասնագիտական շրջանակների փորձագէտների ցանցի միջոցով: Այս գործընթացին մասնակցեցին նաեւ շահագրգիռ կողմերը միջազգային գիտա-գործնական համաժողովներում: Առաջին համաժողովը կայացաւ 2014թ.-ի յունուարին Վարշաւայում՝ մինչ Ռուսաստանի կողմից Ղրիմի բռնակցումը: Այս իրադարձութիւնը վկայեց հարցի կարեւորութիւնը: Տեսական եւ գործնական աշխատանքի արդիւնքը եղաւ «Դիմադրութեան օպերացիոն հայեցակարգը», որը մշակուեց ԱՄՆ միացեալ յատուկ գործողութիւնների համալսարանի (Joint Special Operations University) հետ համագործակցութեամբ:

Միացեալ յատուկ գործողութիւնների համալսարանում մշակուել է դիմադրութեան կազմակերպման դասընթաց՝ նախատեսուած Եւրոպայում ԱՄՆ յատուկ գործողութիւնների ուժերի օպերատորների համար: Բացի այդ, ստեղծուել է առանձին դասընթաց՝ դաշնակիցների եւ գործընկերների համար: Այս դասընթացների հիմքում դրուած է «Դիմադրութեան գործողութիւնների հայեցակարգը» (Resistance Operating Concept – ROC)[40]: Այն կիրառուում է նաեւ համալսարանի այլ ծրագրերում: Հայեցակարգը ծառայում է որպէս համատեղ դիմադրութեան ծրագրման ուղեցոյց եւ հիմնական տեղեկատու փաստաթուղթ՝ ԱՄՆ մի շարք դաշնակիցների եւ գործընկերների համար: Այն օգտագործւում է նաեւ Զինուած ուժերի Յատուկ ռազմական գործողութիւնների կենտրոնում եւ դպրոցում (Special Warfare Center and School – SWCS), Ֆորթ Բրեգում: Հայեցակարգը հրապարակուեց Շուեդական պաշտպանութեան համալսարանի կողմից

38 **Fiala, Otto and Ulrica Pettersson.** "ROC(K) Solid Preparedness Resistance Operations Concept in the Shadow of Russia," *PRISM*, Vol. 8(4), pp. 17–28, 2020. 1 September 2022 <https://ndupress.ndu.edu/Portals/68/Documents/prism/prism_8-4/prism_8-4_17-28_Fiala-Pettersson.pdf?ver=2020-06-12-101122-580>.

39 ***Ibid.***

40 **Fiala, Otto C.** (Ed.) *Resistance Operating Concept (Version 5)*. Stockholm: Swedish Defence University, December, 2019. 1 September 2022 <https://www.academia.edu/77714977/Resistance_Operating_Concept_ROC_>.

2019թ.-ի դեկտեմբերին, իսկ ԱՄՆ Միացեալ յատուկ գործողութիւնների համալսարանը այն հրատարակեց 2020թ.-ի երկրորդ եռամսեակում[41]:

Դիմադրութեան գործողութիւնների հայեցակարգի նպատակն է համապարփակ, բայց հակիրճ ներկայացնել դիմադրութեան հիմնական տարրերը: Դրանք հիմնուած են կայունութեան վրայ եւ ընդգրկում են համապետական ու համահասարակական ներուժը: Վարդապետութեան հիմնական բաղադրիչներն են նախաճգնաժամային պատրաստութիւնը եւ դիմադրութեան կազմակերպութեան ձեւաւորումը, որը պէտք է ունենայ հաւաքագրման, հետախուզութեան, ֆինանսական եւ նիւթատեխնիկական ապահովման, ուսուցման, կապի եւ անվտանգութեան կարողութիւններ:

Հայեցակարգը նկարագրում է ընդհատակեայ ցանցերի, օժանդակ ուժերի, պարտիզանական շարժման եւ քաղաքացիական բաղադրիչի ձեւաւորումը: Այն ներառում է նաեւ դիմադրութեան համար անհրաժեշտ այլ ցանցեր: Այս մոդելները նոր չեն, դրանք դեռեւս Երկրորդ համաշխարհային պատերազմի աւարտից յետոյ ամրագրուած են ԱՄՆ Զինուած ուժերի վարդապետութեան մէջ, ինչպէս նաեւ մասնագիտական գրականութիւնում:

Հայեցակարգում շեշտուած է նախաճգնաժամային ծրագրի անհրաժեշտութիւնը, որը պէտք է ներառուած լինի երկրի ազգային պաշտպանութեան համակարգում: Հաւանական հակառակորդները պէտք է տեղեկացուած լինեն այդ ծրագրի մասին՝ զսպման ռազմավարութեան շրջանակում:

Ազգային դիմադրութիւնը եւս պատերազմի այնպիսի ձեւ է, որը պէտք է նախապէս ծրագրուի: Դիմադրութեան գործառնական հայեցակարգը ծառայում է որպէս ուղեցոյց՝ ազգային մակարդակում դիմադրութեան ներուժ ստեղծելու համար: Այն խաղաղ ժամանակ օգնում է երկիրը պատրաստելու դիմադրութեան՝ ապահովելով գործուն քայլեր եւ կազմակերպչական ցուցումներ: Հայեցակարգը միաժամանակ ընդգծում է գաղափարական-քաղաքական դաշտի կարեւորութիւնը ճգնաժամի պայմաններում: Սա նուազեցնում է մրցակցող գաղափարախօսութիւնների կամ կազմակերպութիւնների ի յայտ գալու հաւանականութիւնը, որոնք ձգտում են քաղաքական նպատակների եւ ոչ թե կարգի վերականգնման: Հայեցակարգի առանցքում է ազգային ինքնիշխանութեան վերականգնումը օրինական կառավարութեան ղեկավարութեամբ, որը կարող է գտնուել նաեւ աքսորում[42]:

Երբ հաւանական հակառակորդը տեղեկացուած է երկրի կամքի եւ ունակութեան մասին՝ օկուպացիային դիմադրելու համար, դա դառնում է զսպման ռազմավարութեան մաս: Դիմադրութեան գործառնական հայեցակարգը հնարաւորութիւն է տալիս աւելի լաւ հասկանալ եւ համակարգել դիմադրութեան ծրագրման ջանքը եւ այն երկրում, որը ձգտում է ստեղծել դիմադրութեան կազմակերպութիւն, եւ այն դաշնակից երկրներում, որոնք պատրաստ են աջակցել այդ ջանքին:

Այսպիսով, ՀՊԱՀ շրջանակում տարածքային պաշտպանութեան համակարգի եւ տարածքային պաշտպանութեան ուժերի ներդրումը բարդ գործընթաց է: Այն պահանջում է սերտ փոխգործակցութիւն յատուկ գործողութիւնների ուժերի, պահեստազօրային ուժերի եւ կանոնաւոր

41 **Fiala**, *ROC(K) Solid Preparedness Resistance Operations Concept in the Shadow of Russia*.
42 ***Ibid.***

ուժերի միջեւ: Հաշուի առնելով յատուկ գործողութիւնների եւ պահեստազօրային ուժերի ձեւաւորման ընթացքը, ինչպէս նաեւ զինուած ուժերի ընթացիկ վերափոխումը, տարածքային պաշտպանութեան ներդրումը պէտք է իրականացուի համապատասխան ռազմավարութեան շրջանակում, որպէս Հայաստանի ազգային պաշտպանական ռազմավարութեան մաս: